

Պ-698-28.07.2020, 11.09.2020-SSQP-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՉ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր՝ 2.1-ին հոդվածով:

«Հոդված 2.1. Սահմանամերձ համայնքներում դպրոցական դասագրքերը տրամադրվում են փոխհատուցմամբ: Փոխհատուցման տրամադրման չափորոշիչներն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ:

«Աղբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով օթեւանին հասցված այն նյութական վնասները, որոնք չեն հանգեցրել սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օթեւանից զրկվելու դեպքերին, ինչպես նաեւ վերոնշյալ գործողությունների հետեւանքով գյուղատնտեսական ոլորտին հասցված նյութական վնասները ենթակա են փոխհատուցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ:

«Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաեւ միանվագ գումարային աջակցություն՝ համապատասխանաբար 3,000.000, 2,000.000 և 1,000.000 դրամի չափով, իսկ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում՝ 3,000.000 դրամի չափով: Փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով:

«Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերում զոհված քաղաքացիների ընտանիքներին տրամադրվում է նաեւ միանվագ գումարային հատուցում՝ 5.000.000 դրամ:

Սույն օրենքի համաձայն՝ ընտանիքի անդամներ են համարվում

1) ամուսինը:

2) զավակը (զավակները):

3) ծնողը (ծնողները).

4) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը եւ եղբայրը, ինչպես նաեւ զոհված քաղաքացու խնամքի տակ գտնված 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը եւ եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը եւ եղբայրը հատուցման իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

Սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված անձանց բացակայության դեպքում հատուցման իրավունքից կարող է օգտվել նաեւ այլ անձ, եթե դատական կարգով հաստատվել է, որ`

1) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը եղել է զոհված քաղաքացու խնամքի տակ եւ ունեցել է հաշմանդամության կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք.

2) զոհված քաղաքացին մինչև 18 տարին լրանալը գտնվել է այդ անձի խնամքի տակ:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածում «2021» թիվը փոխարինել «2024» թվով:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին, 2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման կարգը Կառավարությունը սահմանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո` երկամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈՂԿԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքը (այսուհետ` Օրենք) լրացնել նոր` 2.1-ին հոդվածով.

«Հոդված 2.1. Սահմանամերձ համայնքներում դպրոցական դասագրքերը տրամադրվում են փոխհատուցմամբ: Փոխհատուցման տրամադրման չափորոշիչներն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.

«Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով օրեւանին հասցված այն նյութական վնասները, որոնք չեն

հանգեցրել սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օրեւանից զրկվելու դեպքերին, ինչպես նաեւ վերոնշյալ գործողությունների հետեւանքով գյուղատնտեսական ոլորտին կենդանիներին հասցված նյութական վնասները ենթակա են փոխհատուցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ ժամկետներում»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաեւ միանվագ գումարային աջակցություն՝ համապատասխանաբար 3.000.000, 2.000.000 և 1.000.000 դրամի չափով, իսկ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում՝ 3.000.000 դրամի չափով: Փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում:

«Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամության, հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաեւ միանվագ գումարային աջակցություն՝ համապատասխանաբար 3.000.000, 2.000.000 եւ 1.000.000 դրամ:»: Փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով պարբերությամբ.

«Սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված դեպքերում զոհված քաղաքացիների ընտանիքներին տրամադրվում է նաեւ միանվագ գումարային հատուցում՝ 5.000.000 դրամ»:

Սույն օրենքի համաձայն՝ ընտանիքի անդամներ են համարվում

1) ամուսինը.

2) զավակը (զավակները).

3) ծնողը (ծնողները).

4) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչեւ 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը եւ եղբայրը, ինչպես նաեւ զոհված քաղաքացու խնամքի տակ գտնված 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը եւ եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչեւ 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը եւ եղբայրը հատուցման իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

Սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված անձանց բացակայության դեպքում հատուցման իրավունքից կարող է օգտվել նաեւ այլ անձ, եթե դատական կարգով հաստատվել է, որ՝

1) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը եղել է զոհված քաղաքացու խնամքի տակ եւ ունեցել է հաշմանդամության կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք.

2) զոհված քաղաքացին մինչեւ 18 տարին լրանալը գտնվել է այդ անձի խնամքի տակ:»:

խնամել է զոհված քաղաքացուն մինչեւ նրա 18 տարին լրանալը:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածում «2021» թիվը փոխարինել «2024» թվով:

Հոդված 6.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին, 2-րդ եւ 3-րդ հոդվածներով նախատեսված փոխհատուցման կարգը
Կառավարությունը սահմանում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն եվ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-698-28.07.2020-SSԳԲ-011/01) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածում «կենդանիներին» բառը փոխարինել «ոլորտին» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված անձանց առաջին, երկրորդ կամ երրորդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում տրամադրվում է նաև միանվագ գումարային աջակցություն՝ համապատասխանաբար 3,000.000, 2,000.000 և 1,000.000 դրամի չափով, իսկ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում՝ 3,000.000 դրամի չափով: Փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «պարբերությամբ» բառը փոխարինել «2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերության 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «զոհված քաղաքացին մինչև 18 տարին լրանալը գտնվել է այդ անձի խնամքի տակ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«Լուսավոր Հայաստան» խմբակցություն		Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին հոդվածով՝ «Հոդված 4.1. Սահմանամերձ համայնքներում գերեվարված կամ առևանգված Հայաստանի Հանրապետության քաղաքացու ընտանիքի անդամներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվում է միջին աշխատավարձի չափով փոխհատուցում մինչև վերջինիս Հայաստանի Հանրապետություն վերադարձնելու օրը: Սույն հոդվածի իմաստով ընտանիքի անդամ են համարվում գերեվարվածի (առևանգվածի) ամուսինը, անչափահաս, մինչև 26 տարեկան՝ սովորող կամ հաշմանդամություն ունեցող զավակը, խնամքի տակ գտնվող և համատեղ բնակվող անաշխատունակ անձը:»:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

«Լուսավոր Հայաստան» խմբակցություն		Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «ՀՀ Վայոց Ձորի Խնձորուտ, Գնիշիկ, Արարատի մարզի Ուրցալանջ, Սյունիքի մարզի Նժդեհ, Արևիս, Սալվարդ համայնքների նկատմամբ ևս տարածվում են սույն օրենքի 2.1-ին, 4.1-ին, 5-րդ և 6-րդ հոդվածներով նախատեսված արտոնությունները»:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
--	--	--	----------------------	----------------------